ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունվարի 2025 թվականի N 14-Ա

ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՈՒՍՎ ԶՈՐԲԱՅԻ ՀԱՍՈՅԱՆԻ ԱՆՈՒՆԸ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՑՈՒՑԱԿԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Նորոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության 2024 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 36/4636 գրությունը, ինչպես նաև Արաքս համայնքի բնակարանային հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 5-ի N 04 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի նախկին բնակիչ՝ զոհված ՈՒսվ Զորբայի Հասոյանի անունը հանել բնակարանային ապահովման հաշվառման հերթացուցակից:

2.Հերթացուցակից հանելու նպատակով դիմել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը համապատասխան միջնորդություն ներկայացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. հունվարի 10
Արաքս համայնք